



ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 97


31 ՄԱՅԻՍ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀԱՐԱՐԱՐԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ









# ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ  
ՇԱՐԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ-

Երրորդ տարի 31 Մայիս 1913 Թիւ 97

«Մերազան Քահանայապետն Պոս Ժ. կը մտայր որ Կաթողիկէ Առնագանգ շաքաքերը բա-  
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-  
թարել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մտքովն առիւնաւորութեան համար  
Մերազան Հայրն արագին կ'օրհնէ յիշեալ Շաքաքերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:  
Համակ Կաթ. Մէր թէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թեղեանց, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ,  
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 րոյ ամսամարտ:

## ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ՀԱՅՔԵ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՍ

(Շար.)

Զգացումի ու հաւատքի այս հիանալի  
պատճառներէն զատ, քաղաքական զուգա-  
դիպութիւն մըն ալ մեծ պատեհութիւն ու  
գրեթէ հարկաւորութիւն կու տար այս ճամ-  
բորդութեան: Քանզի թէեւ Տրդատայ քա-  
ղութեամբ և հեռաւոր վարչագիտութեամբ  
Հայաստան խաղաղացած էր արտաքին յար-  
ձակումներէ ու ներքին խռովութիւններէ  
ու յարատեւ պառակտումներէ. սակայն Հու-  
մայ Կայսրութեան հանդէպ նոր դիրք մը  
ստեղծուած էր՝ Մաքսիմիլիան Դայա (Dala)  
Կեսարու հետ եղած պայքարին պատճառաւ:  
Մաքսիմիլիան՝ քեոորդի Դաղերիոսի, վայ-

րենաւարոյ էր և բիրտ. 305ին, երբ Դիոկ-  
ղետիանոս գազան հալածիչը հրաժարած  
Կայսրութենէ՝ կը մեկնէր Նիկոմիդիայէ, իր  
ծիրանին նետեց Մաքսիմիլիանոսի ուսերուն վրայ  
և նա՝ անոր անգթութեանը հետ մէկ-  
տեղ, առաւ Ասորիքը, Պաղեստինն ու Եգիպ-  
տոսը. և երբ, 308ին, Լիկինիոս Աւգոստոս  
հռչակուեցաւ Դաղերիոսէն, արտմտելով ինք-  
զինքը Աւգոստոս կոչել տուաւ, և սկսաւ  
Քրիստոնեաները չարաչար հալածել: «Մաք-  
սիմիլիոս» որ բռնակալ էր յԱրեւելս, Կ'ըսէ  
Եւսեբիոս\*, ամբարձագոյն քան զամենայն  
իշխանակիցս իւր եւ ոխերիմ հալածիչ  
աստուածպաշտութեան... բարիասեացն եւ  
ամենայն լաւութեանց հակառակ անօրէն  
Իշխանն... հնարէր մեհենայէր զամենայն...  
բազմօրինակ ընդդէմ մեր Քրիստոնէից պա-

\* Պատմ. Եկ. Դպր. Թ. Գլ. Ա. Բ. Գ. Տպ. Վե-  
նետ. 1877:



սերագնաց... բազմաց պատճառ մահու եղ-  
եսալ... կամակար հանութեամբ բռնաւորին  
վերսին բորբոքեցաւ հրդեհ հալածանացն  
ընդդէմ մեր»։ Եւ լսելով Հայոց դարձը, քա-  
լեց անոնց վրայ ալ (յամին 311), իրենցմէ վը-  
րէժ լուծելու և նոյն իսկ հեթանոսական կը-  
րօնքի վերադարձնելու համար։ «Հան-  
դերձ ուխիմբ, կ'ըսէ Եւսեբիոս\*», յարեալ  
եւ պատերազմ ի բռնաւորեն ընդդէմ Հա-  
յոց, որք ի սկզբանէ անցի բարեկամք եւ  
մարտակիցք էին Հռոմոյց, զորս Քրիստոն-  
եայս եւ յեկրպագութիւն նմարսին Ասու-  
ծոյ փոյս, նեղելով բռնաւորին ասելոյն  
Ասուծոյ՝ զի կռոց եւ դիւաց զոնեցեն,  
փոխանակ բարեկամաց քեամիս, եւ փո-  
խանակ նիզակակցաց պատերազմողս ընդ-  
դէմ իւր յարոյց զնոսա...»։ Բայց Մաքսիմի-  
նոս շատ խաբուեցաւ իր հաշիւներուն մէջ։  
Որովհետեւ քաջարին Տրդատ, թէպէտեւ  
խաճմտութեամբ կը յարգէր Հռոմայեցւոց  
հետ իր ունեցած դաշինքները, սակայն այս  
գոռող թշնամին, — որ և յափշտակիչ մըն էր,  
Աւգոստոսութեան, — ետ մղելու ստիպուած էր  
իր և իր ժողովրդեան հաւատքի անհամեմատ  
կերպով անգին զանձը պաշտպանելու համար։  
Առաջին անգամն էր որ զինուժ կը պաշտ-  
պանուէր Քրիստոնէութեան արդար զատը,  
անիրաւ յարձակողին դէմ։ Տրդատ իր քա-  
ջարի զօրքերով հզօր դիմադրութեամբ զար-  
կաւ ետ մղեց աստուածամարտ ամբարտա-  
ւանը. պարտեց զանի շատ տեղեր և աւրեց  
անոր բանակը. ահա ինչպէս Եւսեբիոս կ'ա-  
ւանդէ զայս ալ. «Աւրոնա (Մաքսիմինոս)  
հանդերձ զօրօք իւրովք ի պատերազմի անդ  
ընդդէմ Հայոց ի բազում ուրեք հարեալ վա-  
րաբէր առաջի նոցա»\*\*։ Տրդատ քաջա-  
բար կռուելով անիրաւ, մանաւանդ իշ-  
խանութեան յափշտակիչ բռնակալի մը դէմ,  
մեղանշած չէր ըլլար անշուշտ Հռոմայ հետ

\* Անդ. Գ. Լ. Բ.

\*\* Անդ. — Ձեռք կրնար չիշխատակել մեծանուն  
Գաթրճեանի գիտողութիւնը՝ Եւսեբեայ այս կտորին  
վրայ։ «Զգոն իսկ, կ'ըսէ, բաւական զինք փոք ալլ քս-  
տոյ պատմութեան Եպիսկոպոսին Կեսարացոց վառ  
Հայոց պատերազմին յաղազ հաւատոյ՝ ընդ Կայսերն  
Մաքսիմինեայ Դայեայ»։ Տիեզ. Պատմ. Բ. էջ 480.

կռուած դաշինքներու և փոխանակուած եր-  
դումներու դէմ. սակայն որովհետեւ այսպիսի  
պատերազմով խաղաղութիւնը վրդոված և  
թշնամութիւն սերմանուած եղաւ, հարկը կը  
ստիպէր որ Հռոմայ միահեծան նոր տէրերուն՝  
Կոստանդինոսի և Լիկինիոսի հետ նորոգէր  
նախկին դաշինքները՝ բարեկամութեան և զի-  
նակցութեան, զորս կը յիշեն Եւսեբիոսի հետ  
գրեթէ ամէն պատմաբանք, նոյն ինքն Յու-  
լիանոս \* . այս պարագայն առաւելագոյն  
յորդոր մըն էր այս գեղեցիկ ու բարեպատեհ  
ճամբորդութեան։

Երբ այսպիսի քաղցր մտածութիւններով  
երկար հսկելէ վերջը, Տրդատ իր դիւաւու-  
րութիւնը յայտնեց իր հագեւոր Հօրը՝ Գրիգորի  
Լուսաւորչի Հայրապետի, զեղաւ լցաւ անոր  
սիրտն ալ ուրախութեամբ և հին յիշատակ-  
ներ զարթեան նաեւ անոր մտքին մէջ։ Քան-  
զի ան ալ իր հօրն Անակայ ոճիւրը քաւելու  
համար, ի Կեսարիա թողլով իր սրբատուն  
Կողակիցն ու երկու անչափանոս զաւակները,  
Քրիստոնէական անձնուրացութեամբ ուղեւո-  
րած էր Տրդատայ քով և յարած անոր՝ երբ  
նա կը գտնուէր Հռոմայեցւոց աշխարհին մէջ՝  
ուր՝ իբր Քրիստոնեայ եռանդուն, շատ ծա-  
նօթներ ու բարեկամներ ունեցած էր. կա-  
րօտացած էր անոնց տեսութեան. բայց մա-  
նաւանդ տեսաւ որ նախախնամութիւնը բա-  
րեպատեհ առիթ կ'ընծայէր իրեն հաստատե-  
լու իր սիրելի Հայաստանեայց նորածին Եկե-  
ղեցին, հաղորդ ընելով զայն ընդհանուր Ե-  
կեղեցւոյ Գլխոյն Օրհնութեան, հաստատու-  
թեան և տուչութեան, իբրեւ անոր մի  
մասը. միշտ ի հաղորդութեան անոր հետ և  
անկէ առնելով իր իշխանութիւնը։ Այս հա-  
ւատքը Ուղղափառ Հովիւներէն սորված էր  
Գրիգոր ի մանկութենէ. և այն զարգացած  
և արմատացած էր իր սրտին մէջ՝ ի Մարտի-  
րոսաց Քաղաքին, Գեանաղամբաններու խոր-  
հրդաւոր միջնորդութիւն մէջ։ Կարգաւորած էր  
ամէն բան ի Հայաստան. սակայն դեռ բան  
մըն ալ պէտք էր՝ այս կարգն ու սարքը տե-  
ւական ընելու համար. ամէն բանի բարձրա-  
գոյն հաստատութիւնն ու օծութիւնը՝ Կա-

\* Տե՛ս Գաթրճեան, Բ. էջ, 463, ի Ման.



թողիկէ Եկեղեցւոյ բարձրագոյն ճոխութեան ձեռքով. Հայ Եկեղեցին այս Մօր դուստրն էր:

Ուրեմն Գրիգոր և Տրդատ որոշեցին երթալ անյապաղ ի Հոռոմ, ի տես նորահաւատ ինքնակալին և Ս. Քահանայապետին, Յաջորդին Ս. Պետրոսի և Փոխանորդին Քրիստոսի:

Ահա ինչպէս կը պատմէ Սգաթանդեղոս այս ուղիւորութիւնը\*, իրեւ Կնիք իւր Հայոց դարձին մանրամանութեանց երկարապատում մատենին:

Կոստանդիանոսի դարձը և աստուածպաշտութեան հրաշալիքը պատմելէ վերջը, այս ամէնը, Կ'ըսէ, լսուեցաւ ի Հայաստան, ի դուռն Թագաւորութեանն Արեւիկունոյ առ Տրդատ Արայ Հայոց Մեծաց: Հազիւ թէ լըսեց Թագաւորը, շատ փառք կու տար Ամենասեառնն, կը գոհանար Աստուծոյ խնդութեամբ և մեծաւ ուրախութեամբ, որ իր Ս. անունը հիմա բովանդակ աշխարհի վրայ կը փառաւորէր:

Անմիջապէս Մեծ Արայն Հայոց ճամբորդութեան վրայ մտածեց, խորհուրդ առնոյր վասն ճանապարհացն այնցիկ. և երբ ամէն պատրաստութիւն տեսաւ, իր հետն առաւ զմեծ Արեւիկայիկոյոսն Գրիգոր, և անոր որդին Ռատակէսը (Սրիստակէս), և արքունական զբան վերակացու Եպիսկոպոսն Աղբիանոսը, այլ ճեմարիս եւ ասուածաւսէր\*\*. իսկ զինուորական պաշտօնատէրներէն՝ իր տաճարին չորս գահերէցները, որոնք Բղեաշխ Կ'անուանուէին. և էին Սահմանակալներ՝ Նոր Շիրականի, Ասորեստանեայց, Արուեստականի ու Մաւթթաց: Նոյնպէս հետն առաւ մեծ Իշխանն Անգեղ տան, ու թագադիր Ասպետը, ու մեծ Սպարապետը, Մոկաց, Սիւնեաց, Ռըշտունեաց և Մաղխաղութեան և Սպասկապետութեան Իշխանները ու Շահապիլանի Շահապը և ուրիշ Մեծամեծներ. Եօթանասուն հազարի բանակ մին ալ իրեն ընկերացաւ մինչեւ իր տէրութեան արեւմտեան սահմանները: Տրդատ՝ որ քաջ և իմաստուն քաղաքագէտ էր, ինակա-

նարար իր բաւական հեռաւոր երկիր մեկնելուն առթիւ, սահմանները չէր կրնար անպատասպար թողուլ, թեպէտ և դողար իրմէն դաւաճան Սասանեանը, և գոռոզ յափշտակիչ Կեսարը պարտուած փախած ըլլար: Պէտք էր ամէն անակնկալ պատահականութիւն նախատեսել: Մանաւանդ որ, ինչպէս կը պատմէ Զենոր Գլակ, Հոռոմ երթալու որոշողութիւնը տալէն և ճամբայ ելլելէն վերջը Վրաց պատգամաւորը հասաւ ետեւէն և Հիւսիսոյ Սրբային արշաւանքը պատմելով օգնութիւն ուղեց և Տրդատ երեսուն հազար զօրք զրկեց: «Խորհուրդ ի մեջ առեալ զնալ ի դուռն Կայսեր... եկին հասին ի գաւառն Ապահունեաց... եկն պատգամաւորն Վրաց Իսխանին առ Թագաւորն Տրդատ, եւ խրնդրեալ իւր զօր յօգնականութիւն... Թագաւորն Տրդատ տուեալ երեսուն հազար արանց ի ձեռն Իսխանին Ապահունեաց, եւ արձակեաց յօգնականութիւն Վրաց Իսխանին»\*: Ուստի իր սահմանները ամրացնելու մտօք տարաւ Տրդատ այդ բանակը, և ոչ մինչեւ Հոռոմ իրեն ընկերանալու համար, զոր կարծել յ'րաւի անկարելի է և տղայական, և հեղինակը սահմաններու անցքէն վերջը այլ եւս բնաւ բանակի խօսք չընէր: Մանաւանդ թէ բանակէն բաժնուած ըլլալին կերպով մը հեղինակը կը թելադրէ Կ'իմացնէ ըսելով. «Ետալայր զնայր... ԱՆՑԱՆԵԼ ի սահմանս Յունաց»: Եւ քանի որ Կ'ըսէ թէ՝ «Ընդ ցամաք եւ ԸՆԴ ԾՈՎ, փութացեալ ԱՅԱՊԱՐԷԻՆ», յայտնի է թէ ասանկ ահագին բանակ մը հետեւին չէր կրնար ըլլալ: Նոյնը կը հաստատէ հեղինակը, երբ, Տրդատայ Հոռոմաւորն վերջը միայն Կ'ըսէ թէ Կոստանդիանոս լսած չըլլար:

Ուրեմն ճամբայ ինկաւ Տրդատ իր Եկեղեցական ու աշխարհական բարձրաստիճան ուղեկիցներով, և անցաւ Յունաց սահմաններէն: Ուր որ հասնէր, ուր որ օթեւանէր, որ քաղաքէն որ անցնէր, իշխաններու և ժո-

\* Էջ 649-656, Տպ. Վենետ. 1835:

\*\* Անդ, էջ 630:

\* Զենոր, Պատմէն Բ. Էջ 40, Բ. Տպ. Վենետ. 1889:



դովուրդին կողմանէ մեծարարից ընդունելութիւն կը գտնէին: Փութով յառաջ տարին իրենց ճամբորդութիւնը՝ թէ ցամաքի թէ ծովու ճամբով. յայտնի չէ սակայն թէ ո՞րնաւահանգիստէն նաւ մտան. շատ հաւանական է որ Կիլիկիոյ կողմերէն գացած ըլլան, մօտաւորութեան պատճառաւ, քանի որ ծովով աւելի շուտ կ'երթցուէր և իրենք ալ «փութացեալ անապարհին»: Եւ մանաւանդ որ, առանց անցնելու ուրիշ երկիրներէ, ծովով ուղղակի, կ'ըսէ, «Երբայիմ հասանէին յերկիրն Խալիպցւոց եւ յերկիրն Դաղմասացոց ի Թագաւորական քաղաքն Հոնովմայիցւոց»: Իտալիա և Դաղմասիա միեւնոյն է, որ կը նշանակէ Լատինաց երկիր, ինչպէս Դաղմասերէնը կը նշանակէ՝ Լատիներէն \* :

Հազիւ թէ Հոռոմ հասան, լուրը կայծակի արագութեամբ տարածուեցաւ ու պատմութեացաւ յԱրժունակաւն պաղատանն. զոր երբ լսեցին Աստուածակարգ Թագաւորն պատուակալ արքունոցն՝ Կոստանդիանոս, և Հայրապետն մեծ Արքեպիսկոպոսն աթաբհամուս քրանն, որուն անուն կոչէր Սեղբեստոս, \*\* մեծաւ սիրով ու պատուով զանոնք դիմաւորեցին, ողջագլուրուեցան և տարին իրենց պալատը, և պահ մը թոյլ տուին որ հանգստանան:

(Շարունակելի)

\* Հմմտ. Յովհ. ԺԹ. 20:

\*\* Կամ ըստ Փարիզեան և ուրիշ մի քանի ընթերցողիսկայն՝ Եւսեբիոս:

## ՏԵՐ ԿՈՄԻՏԱՍ ԲԱՅԱՆԱՅ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

ՅԱՆՆԵՆԻՍԻ ԺԱ. ԳԼԽՈՒՆ (\*)

Հոս ներուր ինձ սակաւիկ մի եւս երկարել ներկայ նիւթը: Թէեւ համառօտ ըլլալու համար էր. Տէր Կոմիտասի բազմաթիւ հը-

(\*) Երբ Տէր Կոմիտաս Քհնյ. ի կենսագրութեան հազիւ թէ ԺԱ. գլուխը վերջացուցած և հետեւեալ գլուխներուն հրատարակութեան ձեռնարկած էինք, կենսագրութեան հեղինակը՝ շնորհիւ Անտոնեան Միտրանութեան Վեր. Հարց, ձեռք տնցուցած ըլլալով 1865ին Կ. Վ. Երազմութեանի անձնական ծախքով ապուած տաճկերէն փոքրիկ տետրակ մը, որուն մէջ բարեխօսութեամբ երանելի Տէր Կոմիտաս քահանայի 44 հրաշագործութիւններու վկայութիւններ

րաշքներէն մի քանիները յիշատակելով գոհացած էի, սակայն, անակնկալ կերպով Անտոնեան Միտրանութեան Վեր. Հայր Գրապետը՝ իրենց դիւանէն գտած փոքրիկ տետրակ մը ինձ մատուց, 1865ին Կ. Վ. Երազմութեանի անձնական ծախքով տպուած, որ տաճկերէն լեզուով 41 հրաշագործութիւններ կը պարունակէր համառօտ նկարագրութեամբ որոնք 1771ին ի ներկայութեան Կ. Պոլսոյ Առաքելական Նուիրակ Արհի. Յովսէփ Արքեպիսկոպոսի Մարկիանուպոլսոյ, և նոյն Նուիրակութեան դիւանապետ Գեր. Ֆրանչիսկոս Անթոնիոյի կողմէ, ընդունուած և պաշտօնապէս հաստատուած ըլլալով. կարեւոր համարեցայ անոնցմէ ալ մի քանիները համառօտիւ յիշատակել:

1. — Հետեւեալ հրաշագործութիւնը 1707 Նոյեմբեր 7ին պատահած է, հազիւ Երանելւոյն նահատակութիւնէն քսնի մը օր վերջը:

Լազարեան Ստեփանի մայրը Մարիամ կը պատմէ թէ իւր օղջականերէն Մելքոն աւուսն մէկ մը, հերետիկոս եղած ժամանակը, երբ Տէր Կոմիտասի սուրբ մարմինը գերեզման կը տանէին, ինքն ալ ըստ պատահման ներկայ գտնուելով, բախտը ունեցած էր այն անգին բեռը կրելու. գրպանէն կապուտագոյն թաշկինակ մը հանելով Մարտիրոսին արիւնը սրբեր, և տուն վերադառնալուն զայն տնեցիներուն ցոյց տուած էր: Վերոյիշեալ Մարիամը ինքն իսկ աչքովը նոյն թաշկինակը տեսած ըլլալը կը պատմէ: Ապա թաշկինակը տուիի մը մէջ դնելով, քանի մը օր վերջը գիշեր մը տուփը բանալուն, զարմացմամբ կը տեսնէ որ մէջէն խիստ փայլուն ճառագայթներ կը ցայտեն: Հետեւեալ առաւօտ այս հրաշքը ամենուն պատմած է. և նոյն իսկ Մարիամը անձամբ Մելքոնին բերանէն լսած ըլլալը կը պատմէ: Այս հրաշքէն

համառօտիւ ամփոփուած էին, խնդրեց որ անոնց նշանաւորներէն մի քանի իրեւ շարունակութիւն նոյն գլխոյ՝ հրատարակեալ Որովհետեւ յիշեալ վկայութիւնները 1771ին ի ներկայութեան Կ. Պոլսոյ Առաքելական Նուիրակ Արհի. Յովսէփ Արքեպիսկոպոսի Մարկիանուպոլսոյ և նոյն Նուիրակութեան դիւանապետ Գեր. Ֆրանչիսկոս Անթոնիոյի կողմէ՝ ընդունուած և պաշտօնապէս հաստատուած ըլլալով, մեծ կարեւորութիւն ունին: ԾԱՆ. ԽՄԲ.

*Գրեց*



մի քանի տարի վերջը վերոյիշեալ Մեղքոնին ամբողջ ընտանիքը Կաթողիկէ Ս. Հաւատքը դաւանած, և ինք Մեղքոն Ս. Փրանչիսկոսի՝ փոքր կոչուած կրօնքին մէջ մտնելով Գրիգոր անունը ստացած է. և Զմիւռնիոյ մէջ շատ մը հալածանք քաշելէն յետոյ վերջապէս Հռոմ գացած և հոն բարի մահուամբ մը իւր մահկանացուն կնքած է: Վերոյիշեալ Մարիամը այս ալ կ'աւելցնէ թէ, Հայր Գրիգոր՝ Զմիւռնիա եղած ժամանակ, յիշեալ թանկագին թաշկինակը իրմէն խնդրած ըլլալով, պատասխան առած է թէ, ան՝ Բերայի Ս. Անտոն Եկեղեցւոյն Փրանչիսկեան կրօնաւորներուն պահարանին մէջ պահուած է և թէ այս գիտէ նաեւ Հայր Անտոն Մ. անուն կրօնաւոր մը:

Մենք ստորագրեալքս կը վկայեմք թէ վերոյիշեալ Մարիամ, բոլոր այս պատմածներուն ճշմարտութիւնը Մեր ներկայութեան երգմամբ հաստատած է:

(Ստորագրութիւն) Առաքելական Նուիրակ Լուսաւնդնուպոլսոյ

ՅՈՎՍԷՓ ԱՐՔԵՊՍ. ՄԱՐԿԻԱՆՈՒՊՈԼՍՈՅ

Բերա, 11 Ապրիլ 1771.

2. — Ժամկոչեան Աղեքսանդր անուն անձը կը վկայէ թէ, Անտոն անունով իր մէկ աներձազը համբ ծնած ըլլալով, 1707ին՝ տասներկու տարեկան այս տղան, Ղուկաս եղբորը հետ ի միասին հայրը հետը առնելով Տէր Կոմիտասին Գերեզմանին այցելութեան տարած է. և հոն գերեզմանին ջրէն և հողէն տղուն բերնին մէջ զնելով, տղան իսկոյն խօսիլ սկսած է և առաջին խօսքը «Հայրիկ սիմիք կ'ուզեմ» եղած է:

Վերոյիշեալ Աղեքսանդր՝ սոյն պատմութեան ճշմարտութեանը վրայ Տէր Սարգիս Կաթողիկէ քահանային առջեւ երգում ընելով հաստատած է, և Տէր Սարգիս Քահանայն եւս մեր ներկայութեամբ, Աղեքսանդրի՝ իր առջեւ երգմամբ վկայած ըլլալը իր քահանայական պատուոյն վրայ երգում ընելով հաստատած է:

Որոյ ի հաւատս...

(Ստորագրութիւն) Նոյն ըստ առաջնոյն

Բերա, 9 Օգոստոս, 1771:

3. — Ճիւֆէրեան Լուչիայի Էլմաս անուն մօրաքոյրը կը վկայէ թէ, 1711ին իր բնակած տան Տիրուհւոյն աղջիկը, իւր մօր արկեղ մէջ գտնուած առարկաները օր մը սենեկին մէջ դուրս թափելով, անոնց մէջ նըշմարած է արտակարգ փայլուն բան մը, և տեսնելով որ արիւնաթաթախ ձորձոյ կտոր մըն էր, սքանչացած, և ինչ ըլլալը չգիտնալով իսկոյն իրեն (Էլմասի) վազելով եղածը պատմած է: Եւ ինք տարակուսելով և հաւատք չընծայելով անձամբ ընդ փոյթ նոյն սենեակը դիմելով ակնյայտնի տեսած է որ արիւնոտ ձորձի կտորէն լոյս մը կը շողայ: Նոյն ընդ նոյն աղջկան մօրը դիմելով և առարկանց յոյց տալով, երեւան եղած է թէ նոյն ձորձի կտորը Տէր Կոմիտասի արիւնաթաթախ զգեստին մէկ կտորն էր, զոր իր արկեղ մէջ զգուշութեամբ պահած էր:

Ստորագրեալս կը վկայեմք թէ վերոյիշեալ Էլմաս իմ ներկայութեանս երգմամբ հաստատեց սոյն պատմութեան ճշմարիտ ըլլալը:

(Ստորագրութիւն) Վ. ՅՐԱՆՁԻՍԿՈՍ ԱՆԹՕՆԻՑ

Դիւանապետ Առաքելական Նուիրակութեան

Բերա, 9 Յուլիս 1771.

4. — Մանա. (Մարիամ) Զամիչ կը վկայէ թէ՝ Ալան անունով մարդու մը կողակիցը Հիւրմիւզ, տասներկու տարի շարունակ առանց պաւակ ունենալու մնալուն վրայ 1711ին Տէր Կոմիտասայ բարեխօսութեամբ զաւակ մը ունենալու կատարեալ վստահութեամբ անոր գերեզմանը այցելելու դիտաւորութիւն կը դնէ, և հոն հասնելով սապէս կ'աղօթէ. «Ո՛վ Ս. Տէր Կոմիտաս, եթէ յիրսւի Սուրբ ես, զաւակ մը ունենալու շնորհքը Աստուծոյն ինձի ընդունէ և այն զաւակը թէեւ խեղանդամ ըլլայ, պիտի ընդունիմ հաճութեամբ»: Այսպէս աղօթելէն ետքը գերեզմանին հողէն կ'առնու ու իւր մարմնոյն կը քսէ, և գերեզմանին ջրէն եւս սակաւիկ մի կ'ըմպէ. առոր վրայ ժամանակին ինք զինք յղի կը զգայ և աղջիկ զաւակ մը կ'ունենայ, բայց կաղ վիճակի մէջ ի ծնէ. ապա մեծնալուն՝ յօմար կամօք մայրապետ եղած է:

Այդ զէպքին ճշմարտութիւնը վերոյիշեալ



Չամիչ Մարեմայ մեր առջեւ երդմամբ հաստատած ըլլալուն կը վկայենք :

Ի հաստատութիւն եւայլն .

(Ստորագրութիւն) Նոյն բոս վերնոյն:

Բերա, 6 Յունիս 1771:

5. — Հետեւեալ հրաշագործութիւնը 1732 Դեկտեմբերի մէջ պատահած է: —

Չէօմէքճի Ռօզա անունով կին մը կը վկայէ թէ իր եղբայրը Իսրայէլ, որ ի ծնէ կատարեալ խեղ էր, ինը տարեկան եղած տակաւին չէր կրնար քալել: Հայրը՝ պէտք եղած ամէն բժշկական օգնութիւններուն դիմած ըլլալով, երբ տեսաւ որ ալլեւս յոյս մը չկայ, խեղճ տղան Տէր Կոմիտասին գերեզմանը կը տանի, ու հոն վայրկեան մը ջերմեռանդութեամբ աղօթելէն ետքը գերեզմանին հողէն ու ջուրէն կ'առնու ու տղուն վրայ դնելով ի զարմացումն հոն ներկայ եղողներուն, տղան կը բժշկուի:

Նոյն Ռօզա, այս ալ կը վկայէ թէ ինք անգամ մը ուղեղատապէ բռնուած ապա դալուկի փոխուելով, ի վերջոյ ջրգողով կը տանջուէր, որով հակառակ բոլոր բժշկական հնարքներու յուսահատ վիճակի մէջ պատգարակով կը դիմէ Տէր Կոմիտասի գերեզմանը ու կատարելապէս կը բժշկուի, և քալելով գերեզմանատան մէջ սուն վերադառնալու պատրաստուած պահուն, կը տեսնէ որ պատգարակով տաճկի կին մը կը բերեն Տ. Կոմիտասի գերեզմանը. կը մօտենայ անոր քով և կ'իմանայ թէ երկու տարիէ ի վեր անդամալուծութեամբ կը տառապէր և չէր կրնար բռնաւ քալել, ուստի իր ներկայութեան յիշեալ տաճկի կինը Երանելուոյն բարեխօսութեան ապաւինելով, կը վերստանայ իւր առողջութիւնը և փառք տալով հետիոտն իր տունը կը վերադառնայ:

Սոյն պատմութեանց ճշմարիտ ըլլալը Ռօզա մեր ներկայութեանը երդմամբ հաստատած է:

Ի հաստատութիւն եւայլն .

(Ստորագրութիւն) Յովսէփ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաքելական Նուիրակ Կ. Պոլսոյ

Բերա, 15 Մայիս 1771:

6. — Տիրուհի Սիմոնեան կը վկայէ թէ, Նազըր Աճէմ անուն կին մը, տամբէինգ տարի շարունակ ամուլ մնացած ըլլալով, 1733ին Տէր Կոմիտասայ գերեզմանը կը դիմէ ու հոն գերեզմանի ջրէն վրան կը սրսկէ ու չուանով մը Ս. գերեզմանին շուրջը չափելէ յետոյ նոյն չուանը իր մէջքը կը կապէ, որով ինը ամիս ետքը զաւակ մը կ'ունենայ:

Վերոյիշեալ Տիրուհի, Քէօմիւրճեան Կոմիտաս և Էնտաղեան Անտոնի ներկայութեամբ այս պատմութեան ճշմարիտ ըլլալը և ստուգիւ Տիկին Նազըր Աճէմ այդ մեծ շրնորճին արժանացած ըլլալը երդմամբ հաստատած է: Իսկ Քէօմիւրճեան Կոմիտաս և Էնտաղեան Անտոն, Տիրուհուոյն իրենց ներկայութեամբ երդմամբ հաստատած ըլլալը ստորագրելոյս ներկայութեամբ երդմամբ հաստատած են:

Ի հաստատութիւն . . .

(Ստորագրութիւն) Վ. ՅՈՒՍԵՍԿՈՍ ԱՆԹՈՆԻՍ Իլիսանապեա Առաքելական Նուիրակ Բերա, 4 Օգոստոս 1771:

7. — Հետեւեալը 1736ին պատահած է:

Մաթոսեան Անտոն կը վկայէ թէ Պետրոս անունով եղբայր մը ունէր որ մինչեւ 7 տարեկան և ոչ բառ մը արասանել չկրնալով, հայրը վստահութեամբ սողան Տէր Կոմիտասայ գերեզմանը կը տանի ու հոն գերեզմանին ջրէն ու հողէն տղուն բերնին մէջ դնելով տուն կը վերադառնան: Ի դարձին բոլոր ներկաներուն մեծ սքսնչացումով տղան յըստակ կերպով խօսիլ կը սկսի:

Մենք ստորագրեալս կը վկայենք եթէ Անտոն մեր ներկայութեամբ երդմամբ հաստատեց վերը պատմած հրաշքին ճշմարիտ ըլլալը:

Ի հաստատութիւն . . .

(Ստորագրութիւն) Յովսէփ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Առաքելական Նուիրակ Կ. Պոլսոյ. Բերա, 8 Մայիս 1771:

8. — Հետեւեալը պատահած է 1736ին Մայիս ամսոյ մէջ:

Պաղրիմ Իսկիլիզ անունով կին մը կը վկայէ թէ, Տալիթա անուն իր մէկ գուստըրը ութ տարի շարունակ մտած տղեկներ կը



ծնանէր : Վերջապէս Տիկին Խոկիլիզ՝ Տալի-  
թան Տէր Կոմիտասայ գերեզմանը տանելով  
անոր բարեխօսութեամբ բաղձադուած շնորհ-  
քին կ'արժանանան :

Մենք ստորագրեալս կը վկայենք թէ վե-  
րոյիչեալ Պաղրիմ Խոկիլիզ Տիկին մեր ներկա-  
յութեամբ երգմամբ հաստատած է պատմած  
հրաշքին ճշգրտութիւնը և ճշմարտութիւնը :

Ի հաստատութիւն եւայլն :

(Ստորագրութիւն) Նոյն քոս վերնոյն

Բերա, 18 Մայիս 1771 :

9. — 1743 Նոյեմբեր 5ին՝ Տէր Կոմիտաս  
Քահանայի գումարներէն Սողոմէ, իւր Սա-  
գուլ անուն աղջկանը ըսած է թէ՝ այն գի-  
շերը Տէր Կոմիտասին գերեզմանին վրայ լոյս  
պիտի իջնայ երկինքէն . սակայն Սագուլ՝ իւր  
մօր այդ խօսքին վրայ երկբայելով պատաս-  
խանած է . «Ի՞նչ, կ'ուզես որ ամէն օր ա-  
նոր գերեզմանին վրայ երկինքէն հուր իջ-  
նայ» : Ետքը սակայն արշալոյսէն երկու ժամ  
առաջ շրջակայ փողոցներու ընտելիներէն  
յանկարծ աղաղակ մը կը փրթի, խառն ձայ-  
ներ՝ որ կը պոռային . «Ո՛վ Քրիստոնեաներ  
արթնցէ՛ք, տանիքներու վրայ ելէ՛ք, ու Ս.  
Նահատակին վրայ երկինքէն իջնող լոյսը գի-  
տեցէ՛ք» : Յիրաւի բոլոր մարդիկ խրեց  
տնե-  
րուն տամալիներուն վրայ ելլելով տեսած են  
որ երկինքէն փայլուն լոյս մը իջած էր Մար-  
տիրոսին Գերեզմանին վրայ : Վերոյիչեալ Սա-  
գուլ եւս ինքն ալ աչքովը տեսած ըլլալը կը  
պատմէ :

Ստորագրեալս կը վկայեմ եթէ Սագուլ իմ  
ներկայութեամբ այս պատմութեան ճշմար-  
տութիւնը երգմամբ հաստատեց :

Ի հաստատութիւն եւայլն :

(Ստորագրութիւն) Վ. ՅՐԱՆԶԻՍԿՈՍ ԱՆԹՕՆԻՈ  
Առաքելական Նուիրակութեան Դիւանագլխ  
Բերա, 9 Յուլիս 1771 :

(Շարունակելի)

## ՆԷՅԷԹԻ ԻԾԹԻՄԱԻՅԷՆԻՆ ԱՅԻԼԷ ՎԱՍԻԹԱՍԸ ԻԼԷ ԹԵՐԱԳԳԸՍԸ (\*)

(Տեվամի)

Տէվլէթլէր հաեաթըն մուալլիմի վէ միւ-  
րէպպիսի օլմայըպ մուհաֆըզը տըրլար . աիլէ  
նէսլլէրի պէօյլլթմէք իշիւն եարատըմը պիր  
ճէմլյէթ տիր . տէվլէթ աիլէլէրի հիւսայէ ի-  
շիւն թէշէքքիւլ իթմիշ պիր ճէմլյէթ տիր .  
մէհապպէթիլլէ աիլէնին եարաթտըղլընը գուվ-  
վէթիլլէ տէվլէթ էօրթէր . իշթէ իքի ճէմլյէ-  
թին եէկտիկէրինէ թէլագզը իթտիքլէրի ա-  
հէնկտար նօզթա պու տըր քի, թէրագզըյա-  
թը միւթէգապիլլէլէրինի թէսրիյ իշիւն պու  
նօզթաաա պիրլէշիրլէր : Պու սուրէթլէ սի-  
լահը ալթընտա վաթան ալիլէնին էմն ու  
ասայիշ վէ հիւրրիլլէթինի հիւսայէ իտէր, ա-  
յիլէ տախի պու մէլճա թահթընտա վաթա-  
նըն մուհաֆաղայը շէրէֆ ու հաեաթը իշիւն  
պէօյլլէն նէսլլի թէքէմմիւլէ էրտիրիր : Էվ-  
վէթ, էֆէնտիլէր, տէվլէթլէրին պու վագի-  
ֆէսի ուլլի տիր . ճիհանըն թէրագզըսը իշիւն  
էն մէշհուր ֆիթուհաթլար, վաթանըն պէօյլէ  
նէսլ վէ նիւմա պուլտըղը աիլէ օճաղընըն  
թաթըն հիւսայէսինի տէլմէզ . իսթիլալճըլա-  
րըն ազլը, աիլէ վէ տէվլէթին շու թէրսիմ  
վէ թապլիր իթտիլիմիզ մուգատէրաթը միւ-  
թէգապիլլէսինէ պիր ֆիքը իտինէմէզ : Իս-  
թիլալըն էն բարլագ ֆիթուհաթ տէյի թէ-  
խայիլ իթտիլի շէյ, հէյթի իճթիմաիէնին  
նամիւթէնահի սուրէթտէ աիլէ ճէմլյէթինի  
իսթիլա իթմէսի տիր . իսթիլալճընըն աղզը-  
նա պագարտան, պու «պէօյլլթմէք հագզը  
վէ վագիֆէսի օլըրֆ տէվլէթէ աիւս տիր» .  
իսթիլալճը էօյլէ սիպին կիպի տէվլէթէ մէ-  
հապպէթ վէ աիլէ, ֆիլվագը, հայաթը պէ-  
շէրիլէնին միւվէլլիտի օլմագտան գիյատէ,  
թէշէքքիւլիւնիւ պատի օլտըղը մէյտանտա  
Հաեաթը պէշէրիլէ սաիր մախուզաթ միսիլ-  
լու, նէշվ ու նէմասընըն իլլէթ ու սէպէպիսի  
անճագ քէնտիսինին վիճուտ պուլմասընտա-  
քի բրէնսիբտէ մէպտէտէ պուլապիլիր : Հա-  
եաթը թէվլիտ իտէն աիլէ տիր, անը թէն-

(\*) Տեա թիւ 95 էջ 340.



միյէ իտէն եինէ աիլէ տիր . աիլէ սողուչը պախշ իլէտիկի միաիլու , թէրպիյէյի տախի եանի վիճուտը վէ վիճուտըն էսպապը թէն- միյէսինի վէրի . աիլէ իսարիճինտէ հաեա- թըն թէնէմիւ վէ թէքէմիւլինի արամագ ապէս տիր . գանուէն վէ նիզամը թապիյէթ աիլէյի պիզէ հաեաթը պէշէրիյէնիսն եէկիտնէ մուալլիմէ վէ միւրէպպիյէսի օլմագ իւզրէ իրայէ իտիյօր . աիլէ , պէօյիւթմէք վազի- ֆէսինի հաիզ օլարագ եարատըմը պիր ճէ- միյէթ տիր . պու ուլվի վազիֆէնին իֆասը- նա գուտրէթեապ օլան անճագ աիլէ տիր . զիրա եալընը աիլէ մէշրու տըր . Պու նօգ- թայը նազարտան , էն նաֆի վէ հագիզաթէն էն միւթէրագգի գանուշար վէ իճթիմաի միւրէսաիւէր , պու մահսուլտար վազիֆէնին աիլէտէ գալմասընը մուհաֆաղա իտիւլ , հա- եաթը իճթիմաիէնին թէրագգիյաթը հագի- գիլէսինի պաթի ֆագաթ էմին պիր սուրէթ- տէ թէնիյէ իչիւն ձէնապը Հագգըն աիլէ ճէ- միյէթինէ թէվտի իթտիկի պու թապիի գուվ- վէթլէրին . տէվլէթլէրին մէնֆաաթընա օլա- րագ զասպ իտիլմէսինէ մանի օլուրլար , չիւն- քի «պէօյիւթմէք» հագ վէ գուտրէթիյէ միւ- ճէհէզ օլան աիլէ Նէսուլահըն պիր էսէրի սանահաթը տըր . Սլլահըն բլանընտա հիւր- մէթ պէսլէմէքլէ իքթիֆա իթմէզ , անըն նա- զարընտա , տէվլէթ Սլլահ տըր վէ պու սու- րէթլէ տէվլէթէ բէրէսթիշ իտէր . Պու եէնի իլուհիյէթին գարշընտա եէրլէրէ գատար եիւզ սիւրէրէք , ինթիլալճը պիլճիւմէ հու- գուզընըլա պէրսպէր , էվլաալարընըլըն- ֆիքրինի , բուհընը վէ գալպինի անա ֆէտա իտէր . վէ պու կիւն պիլէ , էվլաալարընըլը պէօյիւթմէք խուսուսընտաքի հիւրրիյէթինի- զին եէնի իլուհիյէթէ գուրպան վէրիլմէսինի գուվվէթլէրտէն թալէպ իթմէքտէն ութսն- մայօր վէ վաթանը թագլիզ պէհանէսիյէ աի- լէյի ալլալթրօր . Ֆագաթ գօրպայընըլը , գուլմը միւճէսէմ քէսիլէն պու ֆէնալըզ տա- հիսի իհրագը զաֆէր իտէմէյէճէք տիր . Պու խուսուստաքի գանաաթըմ լայէթէզլըլէ տիր . խայր , ինթիլալ իլուհիյէթի ալուշընա էվլաալարընըլը աթմազսընըլը , գալպինիզ իւ- զլէլին , եէմին իտէրիմ . պիլզաթ սիզտէն

չըզան հաեաթը սիմանըզա մուաֆըզ սու- րէթտէ պէօյիւթմէք հագգընա մալիքիյէթի- նիզի հէր չէյ իլան իտիյօր . Պէշէրիյէթի եիւքտէլթէն թէրպիէ իսէ թէրպիյէյի եարան բէտէրլիք տիր . վէ պինաէն ալէյհ պիր բէտէր ֆէտաքեարըլընա մուատիլ ֆէտաքեարըլը- լար պուլմագ իչիւն մագամընա իսթէտիկի տտէմի «պէօյիւթմէք վազիֆէսի» իչիւն վէ- քիլ թային իտէպիլիւր վէ թէրագգիի ճիհանըն սըրֆ պու շարթլա եէօրիւյէպիլէճէկինի պու- րատա թապիյաթ , ազլ վէ թարիլալ պէրա- պէր իսիսթիյանըլը տախի իլան իտիհօր .

Յիւհագիզա , հաեաթըն թէշէքթիւլիւ վէ պէշէրիյէթին թէքէմիւլիւ խուսուսընտա , գուվվալը ումուլիյէնին էհէմիյէթի նիսպի- եէսինի ինքեար իթմիյօրըլ . ֆագաթ պիլէլմ քի , պու իքի տէրէճէ տէ պիր ուսուր սայը- լըր . թէրագգիին պէօյիւք սըրըր միւպարէ- զաթը ումուլիյէնին շամաթասընտա տէյիլ տիր . աճէպա նէրէտէ օճագտա , հաեաթը աիլէնին սիւքիւնէթինտէ տիր . Բատիշահա- րըն , վազիի գանուշարըն , ֆաթիհլէրին է- լինտէ տէյիլ տիր . հէր չէյտէն էվլէլ նէրէտէ տիր , եա բէտէրլէր վէ վալիտէլէր տինլէյի- նիզ , վէ պէշէրիյէթտէքի վազիֆէնիզի եիւք- տէլթէն վէ պէօյիւթէն շու քէլիմէլէրէ մուա- ֆըզ սուրէթտէ մուգապէլէտէ պուլուհընըլ . հաեաթը պէշէրիյէնին թէշէքթիւլ վէ թէ- րագգիսինին հիքմէթը ապիյէսի , ահ , ունութ- մայընըլ , գալպլէրինիզտէ , բուհլարընըլտա վէ տօտագլարընըլտա տըր . իմանընըլտա , մուհապպէթինիզտէ վէ քէլամընըլտա տըր , գուարէթ վէ ֆէտաքեարըլընըլտա տըր . վէլ հասըլ հաեաթը աիլէնին պէօյիւթիւլմէսի սայէսինտէ հաեաթը իճթիմաիէնին նէշվ ու նէմաըլ իչիւն ձէնապը Հագգըն սիզլէրէ թէվտի իթտիկի գուվվէթլի հաքիմիյէթ վէ միւրապիթ բէսալէթին ահէնկտար իսթիզաճըն- տա արայընըլ :

ՌԱՖԱՅԷԼ ԽՐԼԱՔԵԱՆ

(Մապաիի վար)



## ՄԱԼԹԱՅԻ

Ո՛ղջ լեր, ա՛սքդ ծովու,  
Տիրամա՛յր գթալից,  
Եւ մի՞ս կոյս սիրարկու,  
Երանեա՛լ դուռ երկնից՝

Գաբրիէլ քեզ տուաւ  
Երկնառա՛խ այս ողջոյն.  
Եւ այի՛ մեղսաբաւ,  
Տու՛ր հանգիստ մեր հոգւոյն:

Խորակէ՛ կայս մեղաց.  
Պարգեւէ՛ կուրաց լոյս,  
Հալածէ՛ չարն ի բաց.  
Ա՛ն բարիս ամէնու:

Յո՛յց տու մեզ որ ես մայր.  
Մեր աղօթքն ընծայէ՛  
Անոր որ մեզ համար  
Ծնաւ, ո՛վ Կոյս, քեզմէ:

Ո՛վ Կոյս գերժ արագե,  
Ամենէն սուրբ եւ հեզ,  
Մեղքերնէս ազատե,  
Եւ ըրէ՛ սուրբ թղմեզ:

Տո՛ւր շաւիղ ապահով,  
Վարժ մաքուր եւ անբիծ,  
Որ Յիսուս տեսնելով  
Ըլլանք քեզ խնդակից:

Գովէ՛ս չոր գերագոյն,  
Փա՛նք Ուղւոյն Միածին,  
Օհնաւորի՛ն Սուրբ Հոգւոյն,  
Մէ՛կ պատիւ երեքին:

Քարգմ. ԽԱՅԻԿ Վ. ԱՅԱՆԱՍԵԱՆ

## ՄԱԼԹԱՅԻ

### ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

(Շար. եւ վերջ)

Արհի. Հէյլէն Եպսկ. Նամիւրի, փակման  
նիստին մէջ բողոք մը կարդաց:

«Յառաջիկայ Հոկտ. ամսուան մէջ ի Լիւ-  
պոնա պիտի գումարուի ազատ-մտածումի  
եօթնեւտասներորդ համաժողովը, որուն նը-  
պատակներէն մին է եղեր՝ բողոքել Հռով-  
մեական Եկեղեցւոյ յանդգնութեան դէմ, որ  
իւր Ս. Հաղորդութեան Համաժողովներովը  
մարդկային մտածումի նախաստիճից կոչ մը  
ուղղեց:

«Ազատամիտներուն այս թշնամանքը մեզի  
զարմանք չի պատճառեր բնաւ. և բնաւ ա-  
մենեւին վախ ալ չազդեր մեզ: Ան կ'ապա-  
ցուցանէ մեզ թէ Ս. Հաղորդութեան Համա-  
ժողովները մեծապէս կը ծառայեն Աստուծոյ  
փառաց ու հոգւոյ փրկութեան: Եթէ այսպէս  
չըլլար, Աստուծոյ ու Եկեղեցւոյ թշնամիները  
այսքան կատաղութեամբ պիտի չյարձակէին  
անոնց դէմ:

«Այսու հանդերձ հարկ կը սեպենք որ  
Մալթայի Ս. Հաղորդութեան այս Համաժո-  
ղովին մէջ բողոքի ձայն մը բարձրանայ ա-  
զատ-մտածումի ծրագրին այս անարգանքին  
դէմ: Ես, իբր նախագահ Ս. Հաղորդութեան  
Համաժողովներուն մնայուն Մասնախումբին,  
կ'առաջարկեմ այս բողոքը:

«Եւ նախ կը խնդրեմ որ ինծի հետ նորոգէք  
ձեր հաւատոյ ներգործութիւնն դէպի Ս. Հա-  
ղորդութեան Խորհուրդը, որուն մէջ կը հա-  
ւատանք որ Յիսուս Քրիստոս, ճշմարիտ Աստ-  
ուած ու ճշմարիտ Մարդ, ճշմարտապէս, ի-  
րապէս և գոյացապէս ներկայ է: Մենք կը  
հաւատանք որ Յիսուս Քրիստոս, ի Ս. Հա-  
ղորդութեան, Աստուածն է ո՛չ միայն ան-  
հասներու, այլ և ազգերու և բովանդակ  
մարդկային Ընկերութեան, և կ'ուզենք Իրեն  
ընծայել հրապարակական, հանդիսաւոր և  
ընկերական յարգութիւններն զորս Իրեն կը  
պարտինք ա՛յնչափ տիտղոսներով:

«Մենք կը ճանչնանք որ Ս. Հաղորդու-  
թեան Խորհուրդը մարդկային բանականու-  
թենէն գեր ի վերոյ է, և թէ ան պիտի չկա-  
րենայ վայն իմանալ. բայց կը հաստատենք  
միանգամայն որ այս Խորհուրդը բնաւ հակա-  
ռակ չէ մարդկային մտքի, և աներկիւղ կը  
յայտարարենք որ մեր սուրբ Հաւատքին հա-  
կառակորդները բնաւ չկրցան ու չպիտի կա-  
րենան ապացուցանել որ ամենափոքր իսկ  
հակասութիւն մը ըլլայ հաւատոյ վարդապե-  
տութիւններուն ու միայն բանականութեան  
լուսով ճանչցուած բացայայտ ճշմարտու-  
թիւններու միջեւ:

«Հետեւաբար, պահանջելով հանդերձ որ  
մարդկեղէն միտքը Ս. Հաղորդութեան Խոր-  
հրդոյն հպատակի, բնաւ նախատական կոչ



մը արձակած չենք ըլլար, այլ՝ այդ միտքն ու մտածումը իր բնական պարունակէն վեր կը բարձրացնենք, և կու տանք անոր վեհութիւն մը, լոյս մը՝ զորս ան երբէք պիտի չկարենար ունենալ ինքն իրեն:

«Ազատ-խորհողները կրնան բազմապատկել իրենց առարկութիւններն ու նախատինքները: Եկեղեցւոյ հաւատարիմ զաւակները ասոնց դէմ միշտ պիտի ապացուցանեն մեր հաստատած ճշմարտութիւնը»:

Հանդիսականաց բազմութիւնը միահամուռ խանդավառ երկարատեւ ծափահարութեամբ մասնակցեցան այս արդար բողոքին, յանուն իրենց երեք հարիւր միլիոն եղբայրներուն՝ բովանդակ աշխարհի մէջ:

Վերջին մեծ թափօրը, որով կնքուեցաւ Համաժողովը, աննկարագրելի գեղեցկութեամբ կատարուեցաւ:

Նախընթաց երեկոյին սեղի ունեցած էր չնաշխարհիկ հանդէս մը: Մալթացիք ուզած էին որ Կարգինալ-Պատուիրակը կատարէ ծովու օրհնութեան արարողութիւնը: Բաց օդի մէջ, ամենաբարձր զիրքի մը վրայէն կատարուեցաւ այս գեղեցիկ հանդէսը, ծովու և հորիզոններու խորհրդաւոր անհունութեան հանդէպ, շողշողացող արեւու տակ, վաթսուոն հազար հաւատացելոց երկրպագութեամբ, բոլոր նաւերէն և ամրոցներէն թընդանօթներու գոռալովը. և երբ սուրբ Ծածանչը բարձրացաւ, Լէլեայի աշտարակներուն վրայէն՝ ութ հարիւր մանկունք հրեշտակային գեղգեղով սկսան երգել Ս. Հաղորդութեան Մեղեդին:

Մեծ թափօրին օրը սքանչելի օդ մըն էր. ամբողջ Մալթայէն կը բարձրանար քաղցր բոյր մը: Այս թափօրը որուն կը մասնակցէին տասնեւհինգ հազար հոգի, տեւեց ճիշդ հինգ ու կէս ժամ: Հանդիսատես ժողովուրդը վաթսուոն հազարէ աւելի էր: Բոլոր ճամբաները զրօշազարդ էին և ծաղիկներ սփռուած. ամպհովանին՝ զոր կը տանէին ազնուականք, ծածկուած էր վարդերով: Ծածանչին վրայ Հովանոցը կը բռնէր Նորին Շնորհազարդ Բարձրութիւն՝ Նորֆոլքի Դուքսը, քովն ունենալով Լորտ Ռալֆըթ Բեարը:

Թափօրը որ սկսած էր ժամը 3ին յետ միջօրէի, երեկոյեան ժամը ութ ու կէսին կանգ առաւ Ծիօրիսնայի պարտէզներուն մէջ չինուած Սեղանին վրայ, ուսկից տրուեցաւ վերջին Օրհնութիւնը: Անթիւ լապտերներու և պէնկալի լոյսերու շքեղութեան մէջ կը նշմարուէր անթիւ բազմութիւնը հարիւր հազար մարդոց, որոնք գետին խոնարհած էին Բանակներու Թագաւորին առջեւ և իբրեւ զծայն ջուրց բազմաց միաբերան կ'երգէին Անոր Օրհնութիւնը, Ս. Հաղորդութեան երգը. «Յրգի՛, լեզու՛, փառաւորեալ մարմնոյ Խորհուրդը, եւ քանկագին Արեան՝ զոր ի գին աշխարհի, քափեց ազգաց Թագաւորը, պրտո՛ղ օրհնեալ որովայնին Մարիամու»...: Եւ այս որոտածայն փառաբանութեան արձագանգ կու տային հնադարեան բերդորայն ու պարիսպները. և ալէտաւան կը տարածուէր ծովերու վրայ և անուշաբոյր խունկին հետ կը բարձրանար յերկինս:

Գիշերը ամբողջ քաղաքը լուսավառութիւն ըրաւ:

Դիտել կ'արժէ որ Կղզւոյն Եպիսկ. Արհի. Բէյս, ութսուներկու տարեկան ծերունին, թափօրի տեւողութեան միջոցին, 5<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ շարունակ, հեփոսն քալեց Ս. Հաղորդութեան ետեւէն. և Կարգինալ Ֆէրրադա, վաթսունեւկէց տարեկան, 5<sup>1</sup>/<sub>2</sub> ժամ շարունակ ինքը միայն տարաւ ոսկեղօծ արծաթեայ ծանր ծածանչը:—

Ապրիլ 28ին Կարգինալ-Պատուիրակը, Վլասիմ. Ֆէրրադա, հրաժեշտի ողջոյն տալու համար գնաց Կղզւոյն Կուսակալին որ շատ յարգալիր ընդունելութիւն մը ըրաւ իրեն: Կարգինալը շնորհակալ եղաւ անոր մարդասիրութեանը և պաշտպանութեանը համար, և ընծայեց իրեն Ս. Քահանայապետին փառաւոր ոսկի մէկ Միտալը, և իր ամուսնոյն ընծայեց նոյնպէս արծաթեայ Միտալը:

Յետոյ այցելեց նաեւ Մովակալին:

Հետեւեալ օրը մեծ պատիւներով մեկնեցաւ՝ Հիւսաբ յաժանաւով:

Յ. Վ. Ն. Ք. Բ.





# ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

## ՏՕՆԱՑՈՅՑ

- Յուճիս 1 † Կիր. դժ. Գ.—Բարեկ. Լուսաւարչին  
2 Բշ. ղկ. Ծնունդ Յովն. Կարապետին  
3 Դշ. աճ. Կոստ. Եւ Եօր ճորա Հեղինեայ  
4 Դշ. ալ. Պահոց  
5 Եշ. ղժ. Թէոդիսիոսի Գաղասացւոյն Եւ  
Թալիլեայ բժշկին Եւ Եօթն  
Կուսանաց:  
6 Ուրբ. ղկ. Պահոց  
7 † Եր. գժ. Գիւլ Եփաւրաց Ս. Զօրն մե-  
րոյ Գր. Լուսաւարչին:

Ս. ՓՐԱՆԿԻՍԿՈՍ ՍՈՒԷԶԵԱՆ (S. François de Sales)  
(Շար. Եւ վերջ)

Այս արթուն հոգիւր միայն իր ժողովրդեան և Այցելութեան կուսանաց համար շաշխատեցաւ. այլ ամէն կաթողիկէից համար՝ իր երկու օգտաշատ գիրքերով, որոնց մին կը կոչէ Աստուածասէր (Philothée), և միւսը Աստուածավախ (Théotime) և որոնք հաւաարապէս կը ծառայեն թէ աշխարհակամներու և թէ կրօնաւորներու: Ժողովուրդը խանդավառութեամբ ընդունեցաւ այս գիրքերը, իբրեւ երկնային նուէրներ. հազարաւոր մարդիկ անոնց մէջ բովանդակուած վարդապետութիւնէն շարժած գարձի եկան:

Երբ երկրորդ անգամ Բարիզ գնաց, ամէն կողմէ անթիւ անհամար մարդիկ կու գային զինքը տեսնելու, ոմանք իրենց հոգւոյն փրկութեան մասին հեռը խօսակցելու համար, ոմանք զինքը տեսնելու սուրբ հետաքրքրութեամբ. բայց ամէնքը առհասարակ իր արժանապատուութեան վրայ ունեցած բարձր համարումէն շարժած: Այդ մեծ քաղքին ամէն եկեղեցիներուն մէջ քարոզեց սուրբ Եպիսկոպոսը: Անրոյ գաւառայով ինքզինքը տուաւ, ինչպէս առաջ, իր հովուական պարտուց անթիւ իր կատարման. կ'այցելէր ամէն տեսակ հիւանդներու, աղքատները կը խոստովանեցնէր, անոնց օգնելու համար ամէն տեսակ զոհողութիւն կ'ընէր. անգամ մը ուրիշ բան չունենալով՝ տուաւ մէկու մը իր մատուած արծաթէ բաժկամանները, և ուրիշ մը արծաթէ աշտանակները. վերջապէս անգամ մըն ալ ողորմութիւն տալ կարենալու համար իր հովուական մատանին գրաւ գրաւ՝ համարելով թէ իր ամէն ունեցածը աղքատներուն կը պատկանի:

1622ին, աշնան, Լիոն երթալու ստիպուեցաւ. Այցելութեան Վանքին մէջ կաթուածի հարուածի մը ենթակալ եղաւ դեկտ. 27ին. Անմեղ Մանկանց ածին օրը, 56 տարեկան հասակին մէջ:

Երբ մահը ստուգուեցաւ, զմոսնելու համար փոքր

բացին և այն ատեն հասկցան թէ իր մեծ հեղու-  
թիւնը, որ ամէնուն զարմանք պատճառած էր, իրեն  
բնական չէր. որովհետեւ տեսան թէ իր լեղուցը (sue)  
պնդացած և բաժնուած էր մանր մանր քարերու, իր  
բնածին բարկութիւնը զսպելու համար քրած անքն-  
հատ բուռն ճիգերուն հետեւանքով:

Այս սուրբ մարմինը Անրոյ տարուեցաւ և թաղ-  
ուեցաւ իր մայրապետներուն եկեղեցւոյն աւագ խ-  
րանին աջ կողմը: Սակայն իր սիրտը, որ այնքան բը-  
ռնկած էր Աստուծոյ սիրով, Լիոն քաղաքը մնաց-  
ուր սրտաձեւ արծաթեայ անօթի մը մէջ ամփոփ-  
ուելէ վերջ յանձնուեցաւ իր աւանդին Վանքին մայ-  
նապետներուն Ապա բարեյիշատակ և Գրիստոսսէր  
Թագաւորը, Լուգովիկոս ԺԳ., նայն սրտանօթին մի-  
ջոցաւ, հրաշալի կերպով հիւանդութենէ մը ազատե-  
լուն համար, գնել տուաւ զայն շուշանաղարդ, ու-  
կեղէն նշխարատուփի մը մէջ, որուն վրայ գրողմէ  
տուաւ իր և Թագուհին փակագիրները (chiffres):

Շատ հրաշքեր գործուած են այս սուրբ Եպի-  
սկոպոսին միջնորդութեան շնորհիւ թէ՛ կենդանու-  
թեան ժամանակ, թէ՛ մահունէն վերջը. սուրբ հաս-  
տատուեցաւ 1665: Ս. Ֆրանչիսկոս Սալէզիանին պատ-  
ուական նշխարները գերծ մնացին 93ի յեղափոխ-  
ականներուն սրբապղծութիւններէն. յայտնուեցան և  
ստուգուեցան 1804ին. մեծահանգէս փառաբորու-  
թեամբ մայր եկեղեցիէն Այցելութեան նոր եկեղեցին  
փոխադրուեցան 1826ին:

## ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ „ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԳՐԲԷՆ

Գիրք Ա.—Գր. Ժ.—Աւելարդ Խոսեֆէ Խոսե-  
լու վրայ:

Որչափ կրնաս, խուսափե՛ մարդոց աղմուկէն. վա-  
ւըն գի աշխարհային պատահարներու խօսակցութիւնը  
մեծապէս խափանարար է հոգեւորին, քեւ միամտե-  
րեանք պատմուին:

Բանգի շուտով կ'աղետիկնի ռեալիստիկութեան և ա-  
նոր գերի կ'ըլլան:

Երանի՛ քե շատ անգամ շուտ ըլլայի ու մարդոց  
մէջ գնուած ըլլայի:

Բայց ինչո՞ւ այնչափ յօժարակամ կը խօսիկն և ի  
միասին կը շաղկապիկն, քիչդեռ շատ քիչ անգամ ա-  
ռանց խղճելին առաստաղներու կը վերադառնան յը-  
ռուքեան:

Անո՛ր համար այնչափ յօժարակամ կը խօսիկն, ո-  
րովհետեւ փոփոխակի խօսակցութեանք իրարմէ մի-  
քառուրիւն գնելու կ'աշխատիկն, ու կը փափաքիկն  
այլեւայլ մտածութիւններով՝ վաստակաբեկ սրտերին  
սփոփելու:



## Ս Ա Մ Ս Ո Ն Է Ն

Հետեւեալը կ'ընդունին՝ Ստաւտնեկն.

Ստաւտն, 6 Մայիս 1913

Եւ եղիցին առաջինք յետինք  
եւ յետինք առաջինք:

Ինչ տեսակ էին սկիզբէն ի վեր մարդոց  
բնոյթը, բարքը, սովորոյթը, քաղաքականու-  
թիւնը, հնարագիտութիւնը, արուեստը, կրօ-  
նական պաշտամունքը ևն.:

Յարաշարժ փոփոխականութիւն մը իրենց  
տեսակներուն համաձայն. եւ միշտ այսպէս  
եղած է ու պիտի ըլլայ:

Ո՛ր մնացին այն հզօր ու ծաղկեալ պե-  
տութիւնները, ազգերը եւ քաղաքները:

Դարեր դարերու, ազգեր ազգերու, պե-  
տութիւնք պետութիւններու, բարքեր ու  
վարքեր՝ սովորոյթներու և կարգերու. մո-  
լութիւնք և մոլորութիւնք՝ մին միւսէն ա-  
ւելի վտանգաւոր ու կործանարար մոլեռան-  
դութեանց ու իմաստակութեանց, կուսակ-  
ցութեանց և վերջապէս վարկաբեկ անկրօ-  
նութեան ու ոչնչութեան յաջորդեցին:

Մարդկային տեսակէտով՝ առաջնակարգ  
եղողները ես պիտի մնան ու ես մնացողները  
առաջ պիտի անցնին:

Այս ամէնը բարձրէն դիտող ու դատող մը  
գտնուիլն ալ անուրանալի կերպով կը հաս-  
տատէ հնութիւնը ու պատմութիւնը, ու կ'ա-  
պացուցանէ թէ հունաւորէն վեր Անհուն մը,  
անցաւորէն վերջը Անանց մը, ժամանակա-  
ւորէն յետոյ Յաւիտենական մը, ստեղծուե-  
ծէն վեր Անստեղծ և Ստեղծող մը, անիրա-  
ւէն անհունապէս բարձր արդարութիւն ու-  
նեցող մը՝ Դասաւոր մը՝ հուսկ ուրեմն Աստ-  
ուած մը կայ, որուն երկրիս վրայ ապա-  
րանքն ու դատարանը ճշմարիտ եկեղեցին է  
և իր ներկայացուցիչը՝ Եկեղեցւոյ երեւելի  
գլուխը Ս. Պապն է. ահա այս պատճառաւ  
Ս. Եկեղեցին երկրիս վրայ կը կոչուի արքա-  
յութիւն Աստուծոյ:

Ինչպէս քաղաքական և հեթանոսական  
պատմութիւնները, նոյնպէս ալ քրիստոնէ-  
ութեան պատմութիւնը ակներեւ ցոյց կու  
տայ վերեւ յիշուած ճշմարտութիւնը թէ՛  
առաջ անցնողները ես պիտի մնան եւ ես

մնացողները առաջ պիտի անցնին: Այս իրո-  
ղութիւնը մահաւանդ վերջին ատեններս ա-  
ւելի ցայտուն կերպով տեղի կ'ունենայ ա-  
մենէն մեծ, քաղաքակրթեալ, հարուստ, գիտ-  
նական երկիրներէն, ազգերէն ու դասա-  
կարգերէն սկսելով՝ մինչեւ ամենաբարբա-  
րոս, աղքատ և զգես անհատներու վրայ իսկ:

Ինչ են այն զարմանահրաշ դէպքերն ու  
դարձերը, որոնց մէկ մէկ նմոյշները երբեմն  
երբեմն Արձագանգը կը ցուցադրէ իր ընթեր-  
ցողներուն. և մենք զարմանքով կը դիտենք  
յառաջդիմութիւնը, հսկայաքայլ զարգա-  
ցումն ու կազմակերպութիւնը՝ Անգլիոյ և  
Ամերիկայի շողշողուն ոստաններէն, ակա-  
նաւոր անձերէն սկսեալ մինչեւ Հնդկաստա-  
նի, Չինու և Ճաբոնի ապարանքներն ու աշ-  
խարհի ամենէն աննշան գիւղերն ու հիւ-  
ղերը, որ կը կատարուին կաթողիկէ երկսեռ  
առաքելութեանց ու նուիրապետութեան ջան-  
քերով:

Արդարեւ ամենէն անտարբեր և անկրօն  
անձ մը որ բանականութիւն ու քչիկ մը  
խիղճ ունի, կը տեսնէ ու կը խոստովանի  
թէ Աստուծոյ մասը կայ հոս:

Արդ՝ մերձեցնելով մեր ամբողջ հայ ազ-  
գին և ի մահաւորի մեր Կաթողիկէ հայ հա-  
սարակութեան այս ճշմարտութեան իրակա-  
նութիւնը, կը հարցնեմ թէ առաջ կ'երթանք  
թէ ետ կը քալենք:

Թո՛ղ պատասխանեն ու պատասխանատու  
ըլլան հոռց ի վեր միեւնոյն դիտումով ազ-  
գին մէջ հակառակութիւն սերմանողները.  
որոնք մոլութեանց ու մոլորութեանց կամ  
անկրօնութեան կամ ազգայնամոլութեան  
մեղոյրներով շարաւազած ու հմայուած, իրենք  
զիրենք ազգին իրաւանց պաշտպան ու հա-  
սարակութեանս վերականգնիչները կը ցու-  
ցնեն ու կ'երազեն. մինչդեռ ծառը պսուղեմ  
ճանցուիլ սկսաւ բարեբախտաբար:

Ուրախ ենք որ հակահոսանքը (réaction)  
սկսաւ նոյն իսկ աշխարհականներէն՝ գա-  
ւառներուն մէջ, որոնց օրինակին հետեւիլ  
կը խրատենք ու կը յորդորենք: Ճշմարտու-  
թեան ակնադրութիւն պէտք չէ բաժնուիլ Ս.  
Բահանայապետին խօսքը մեզի Կաթողիկէիցս  
համար Գրիստոսի Տեսուն մեւոյ խօսքն է:  
Փրկութեան տախտակը՝ անոր անպայման հը-  
պատակութիւնն է:

ՃԵՍԱՐԻՏ ԿԱԹՈՂԻԿԷ ԱԶԳԱՅԻՐ



## ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

Հենրիկոս Ը. որ Կաթողիկէ Եկեղեցիէն բաժնեց Անգղիան, Սուրբերու Կղզին, հինգ կին առաւ, զորոնք յաջորդաբար սպաննել տուաւ: Մահուան կէտին՝ շուրջը գտնուողները դիտելով աղաղակեց. Ամեն բան կորուսիմք, պէտքերիւն, հասկաւ, խիղն, երկիմք:

\* Գոյօ տ'երպուա, նշանաւոր, աւրարիշտ յեղափոխականը որ Լիոնի մէջ 1600 անմեղներու արիւնը մտած էր, ամենուն առնէ՞քին և պժգանքին նշաւակ ըլլալով, Ֆրանսայի ազգային ժողովին հրամանաւ տարագրուեցաւ Հարաւային Ամերիկայի Գայէն նահանգը: Հոն իրմէ կը խորշէին կը փախչէին տմէնքը, նոյն իսկ սեւամորթները, և զինքը կը կոչէին դահիճ կրօնի: Այս լքումին մէջ աղաղակեց. Պատիժս գայ, լիւմբ ուր կը գտնուիմ դժոխի մըն է: Բռնու և հոգեւապառ տենդէ մը բռնուած՝ սկսաւ օգնութեան կանչել Աստուած և Ս. Կոյսը: Զինուոր մը, որ անոր առջի ամբարիշտ խօսքերուն ականջաւոր եղած էր, ծիծաղեցաւ անոր աղօթքին վրայ: Անոր վերջին ժամերուն տեսարանը այնքան զարհուրելի էր որ հարկ եղաւ զինքը փոխադրել մեկուսի յարկաբաժին մը: Դոն քահանային հասնելէն առաջ աչքերը դարձան, անդամները սոսկալի կերպով պրկուեցան, գալարուեցան, արիւն և փրփուր փսխեց և այնպէսով վերջին շունչը փչեց: Սեւամորթները կիսովին միայն թաղեցին անոր մարմինը, որ կեր եղաւ խողերու և ազոաւներու:

\* Վոլթէն, մահուան տտեն կատաղութենէն և յուսահատութենէն ինքզինքը կ'ուտէր, կտոր կտոր կ'ըլլար: Թրոնէն, որ զանկայ կը խնամէր, ըսաւ. Ռեչափ բաղձալի եր ու մեր փիլիսոփաները ակամասես ըլլալին ասոր խղճի խայթեռէ բզիկ բզիկ եղող հոգւոյն սարսափելի արձայնութեանց: Այս անընկեց տեսարանը քերես բանար իր գրուածքներուն ընթերցումով կոյրցած մարդոց աչքերը:

\* Ապխսաւանաւոր, փաստաբանը, շունը

եւ ապուխսը. — Որոշաշուն մը կը սպրդի կը մոնէ ապուխտաւանաւոր մը խանութը, կտոր մը ապուխտ կ'առնէ ու կ'ելլէ: Խանութպանը կը հասնի շանը ետեւէն, բայց շունը կ'ըլլած է արդէն ապուխտը և հանդարտ կը քալէ իր տիրոջ քովէն, որ երեւելի փաստաբան մըն է:

Սակայն վաճառորդը չարածճի է. Ժպտով մը կը մօտենայ շանը տիրոջ և փողոցին մէջ իրաւագիտական խնդրի մը մասին խորհուրդ հարցնելու համար ներում խնդրելով կ'ըսէ.

— Կ'ուզեմ գիտնալ թէ շան մը տէրը պատասխանատու է անոր ըրած վնասին:

— Անտարակոյս:

— Այն ատեն, տէ՛ր, ինձի պարտական էք երկու ֆրանկ, զին կտոր մը ապուխտի, որ քիչ մը առաջ խանութէս յափշտակեց ձեր շունը:

Փաստաբանը, ամօթահար եղած, վճարեց իր պարտքը և մեր խանութպանը սկսաւ ուրախանալ գործածած հնարքին յաջողութեանը համար: Սակայն ուրախութիւնը տըրտմութեան փոխուեցաւ երբ իրիկունը փաստաբանէն ընդունեցաւ հետեւեալ լակոնական տոմսակը.

Դիմ խորհրդակցութեան, որ տեղի ունեցաւ փողոցին մէջ, շան մը կերած ապուխտին մասին, 10 ֆրանկ:

\* Վէտրին կը պատմէ թէ՛ երբ Բարիզէն Մատրիտ դացի սաւառնակով, Ալֆօնս Ժ. Թագաւորը ինձի հարցուց.

— Սպանիան ինչպէս տեսար:

— Դեղեցիկ, բայց խեղճ երկիր մը, Վեհափա՛ռ տէր:

— Բայց սակայն իմ ամենահարուստ գաւառներս կորեցիր անցար:

— Ես իմ գաղափարս չեմ փոխեր, Տէ՛ր Արքայ:

— Տեսնե՛նք, ես Սպանիոյ Թագաւորն եմ և Սպանիան աւելի լաւ կը ճանչնամ:

— Ես զայն քեզմէ աւելի աղէկ կը ճանչնամ, Վեհափա՛ռ Տէր, որովհետեւ ես զայն նկատեցի բարձրէն և միահաղոյն: Ցարդ Աստուծմէ և ինձմէ դատ մէկը այսպէս չէ տեսած զայն:

Թագաւորը սկսաւ խնդալ մտերմօրէն:



# ԳԱԹՕԼԻԲ ՄԵՉՀԷՊԻ ԷՍՍՍԼԱՐԸ (\*)

Թօխումսը քեցասիւլ.— Թարիգի միւս-  
թագիւտէն ուտուլ իտէնին հէր իսթվէսի  
եէնիպիր եանլըլ ասըմ օլտուղը կիպի, հագի-  
գաթըն շէհրահընտան ինհիրաֆ իտէն տին-  
սիգլէրին իճատ իթտիյի հէր սիսթէմտէ, եէ-  
նի պիր գէլալէթ տիր: Իշթէ ծնլարըն իճատ  
քէրաէսի օլան քօխումսը քեցասիւլ, Տար-  
վիցիզմ տախի պու գապիլտէն տիր: Հալպու-  
քի քէնտիլէրճէ հէր միւշքիլի հալլ իթմէյէ  
քիաֆի օլան պու իքի սիսթէմ տախի, սէ-  
պէպսիզ էսէր գապուլ իթմէյէ մէճպուր օլ-  
տուղընտան, թէճարիպի իլմիյէյէ մուխա-  
լիֆ վէ պինաէն ալէյհ տէ, կէրէք իւմ վէ  
կէրէքսէ ազը սէլիմ թարաֆընտան մահքիւմ  
վէ մէրտուտտըրլար:

1. Պագը թապիիուն, Սլլահան տայիր  
մէվճուտ օլան ֆիքրի չիւրիւտէպիլմէք իչիւն  
տիւնհատաքի տիրի մախլուգաթըն մէնշա ու  
մէպտաընը քօխումսը քեցասիւլէ համ ի-  
տէրլէր: Թօխումսը թէնասիւլ տիմէքլէ տէ,  
էվվէլէն հիչ պիր թօխումըն իշթիրազը օլ-  
մագսըզըն, սըրֆ մատտէտէ մէվճուտ գուվ-  
վէթլէրին պիր ճիլվէսի օլմագ իւզրէ, տիրի  
պիր մախլուգըն տօղմասընը անլարլար:

2. Տարվիցիզմ տէնիլէն սիսթէմ, մէվճուտ  
օլան մախլուգաթըն քեաֆֆէսիլին տէ թա-  
պիի սուրէթտէ, եախօտ էն ասի մախլուգըն  
թէքէմիլ թարիգիլէ տահա միւքէմմէլ պիր  
մախլուգա վիւճուտ վէրմէք սուրէթիլէ ի-  
լէրի կէլմիշ օլտուղընը. մէսէլա մայիուն կիպի  
ասի պիր հայվանտան էքմէլի մախլուգաթը  
տիւնեէվիյէ օլան ինսանըն հուսուլա կէլտի-  
յինի իտտաս իտէր:

Կէրէք թօխումսը թէնասիւլ վէ կէրէք  
Տարվիցիզմ սիսթէմի իլք մէվճուտաթըն քիմ  
թարաֆընտան խալգ իտիլմիշ վէ ծնլարըն  
գուվվէյի հայաթիյէսի Նէրէտէն պախշ օլըն-  
մըլ օլտուղընա տայիր իթայը ճէվապտան ա-  
ճիզ տիր:

(\*) Տե՛ս թիւ 93, էջ 285.

Բասթէօրիւն վէ սայիր մէշահիրի իւլէ-  
մանըն պու խուսուտա վագը օլան թէճրիւ-  
պէլէրինտէն սօնրա, արթըգ քօխումսը քե-  
ցասիլիսէն պահա իթմէք, ատէթա ապէսլէ  
ուղընաշմագ գապիլինտէն տիր: Հալմատա վէ  
սուտա, պիր մուհիթի միւսաիտտէ ինքիշա-  
ֆա միւհէյիա հիսապսըզ թօխումլար վար օլ-  
տուղը վէ պու թօխումլար մահվ իտիլէճէք  
օլուրսա հիչ պիր շէյ հուսուլա կէլէմէյէճէյի  
գապիլի ինքեար տէյիլ տիր: Հայվանաթըն  
քեաֆֆէսի տէ այնի գանուհա թապի օլուպ,  
անճագ քէնտի քէնտիլէրինտէն տիրի մէվճու-  
տաթ վասըթասըլլա վար օլապիլիլլէր:

Տարվիցիզմ, եհնասըն քեհալվիլլա էսա-  
սը իւզէրինէ պինա իտիլմիշ տիր, հալպուքի  
եհնասըն սապիք օլտուղը, քեհալվիլլէ քա-  
պի օլմատըղը գապիլէսի լէք աշիքեար տըր:  
Էվվէթ, ճիւնսլէր լսլահ իտիլէպիլիլ, ֆագաթ  
տէյիշտիրիլէմէք. ծնլար էպէտէն միւթէֆէր-  
րիգ տիրլէր: Մախլուգաթտա եէնի պիր ճինս  
հուսուլա կէթիրմէք, պիր վագըթ Լայսիցիլն  
վէ պու կիւն տէ ալիմ թապիիունըն տէտիյի  
իւզրէ, թապիաթըն հիչ եաքմատըղը պիր  
աթլումա օլանագ տըր: Պինաէն ալէյհ, Տար-  
վիցիզմ սիսթէմի թապիաթըն գանուհարընա  
աչըգտան աչըգա մուխալիֆ տիր:

Հէմ տէ, թէճրիւպէնին վէ իլմին պու  
նէթայիճի կէրէք թարիլսճէ վէ կէրէք իլմի  
արգճա միւսալէթ տիր: Մըսըր մէզարըզլա-  
ընտան չըգարըլմիշ էճնասը հայվանաթ վէ  
թէհաճճիւր էյլէմիշ օլան էճնասը նէպաթիլէ  
մուսայէնէ իտիլէճէք օլուրսա, ծնլարըն թամ  
պու կիւնքի եաշայան հայվանաթ ու նէսլա-  
թաթա միւշապիհ օլտուղը կէօրիւմէքտէ  
տիր: Սայիֆ իւլ զիքր մէզարըզլարտան  
թօթլանըլան թօխումլար թամա պիզիմ պու  
կիւնքի նէպաթլարընիզ կիպի նէպաթաթ  
հուսուլա կէթիրմիշ տիրլէր:

Տարվիցիզմ սիսթէմի ազլա տա գարը  
տըր, չիւնքի սէպէպսիզ էսէրլէր գապուլ էյ-  
լէյօր: հէմ տէ նէ էսէրլէր: Ջի հայաթ օլան  
պիւթիւն տիւնհա կիպի պիր էսէր: Պիր սէ-  
պէպին, պիր էսէրի մէյոսանա կէթիթէպիլ-  
մէսի, իշպու էսէրին, հէր հանկի պիր սու-  
րէթլէ օլսուն, օ սէպէպտէ միւհիթէվի պու-



լուսմասը նէթիճէսի տիր . չիւնքի քէնտինտէ  
օլմայանը վէրմէք գապիլսիզ տիր :

Պիր շէյ տիկէրինտէ իւշ սուրէթլէ միւհ-  
թէվի օլապիլիր եանի 1. Պիւրլուն մեվնու-  
սիյէթիյի, մէսէլա պիր մէրմէրին , թաշ օճա-  
ղընտա միւհթէվի օլտուղը կիպի : 2. Մէր-  
թէպիյի քէնալսէ, մէսէլա հիւքիւմրանի Բա-  
տիշահինին , վալի վէ եախօտ միւթէսարը-  
ֆըն հիւքիւմաթընը ինթիվա էյլէտիյի կիպի :  
3. Զըմնէն, եանի էսապընը միւհթէվի օլա-  
րազ , մէսէլա պիւճիւմլէ տիրի մախլուգա-  
թըն , քէնտիլէրինի հուսուլա կէթիւրէն թօ-  
խումարտա միւհթէվի օլտուղլարը կիպի :

Հալպու քի , տիրի մախլուգաթ , հայաթ-  
տան պի պէհրէ վէ աթալէթէ մահքիւմ օլան  
մատտէտէ հիշ պիր սուրէթլէ միւհթէվի օլ-  
մատըլլարընտան , շայէտ մատտէտէն հուսու-  
լա կէթիւլէր տիր եօլընտա իտաիա իտիլէ-  
ճէք օլուրսա , սէպէպսիզ էսէր գապուլ ի-  
տիլմիշ պուլուշըլաճազ տըր :

Պուշտան մատա հիշ պիր սէպէպ , ճիւնէն  
քէնսիսիքն Ֆայիզ օլան պիր էսէր մէյտանա  
կէթիւրէմէզ , չիւնքի աքսինի գապուլ իթ-  
մէտիյիմիզ թագտիրսէ մեվնուսիյիքին պու  
սէրէքնի քէֆիվիլիզլինէ պիր սէպէպ կէս-  
թէրիլէմէյճէք տիր , պինաէն ալէյհ տէ սէ-  
պէպսիզ պիր էսէր հալինտէ գալաճազ տըր :  
Զի հայաթ մախլուգաթըն , հայաթտան մահ-  
րում օլան մատտէյէ Ֆայիզ օլտուղընը քիմսէ  
ինքեար իտէմէզ . շու հալտէ պուշըլար մատ-  
տէտէն իլէրի կէլէմէզլէր , եօգսա սէպէպսիզ  
էսէր կիպի գալըրլար :

Այնի սէպէպլէրէ մէպնի տէ , Ֆայիզ ճինս-  
տէն օլան տիրի մէվնուտաթ , ճինալէրի տուն  
օլան մէվնուտաթըն էսէրլէրի օլամաղլար ,  
մէսէլա ինսան մայմուշտան իլէրի կէլէմէզ ,  
եօգսա սէպէպսիզ պիր էսէր հուսուլա կէթիւլ  
օլուր : « Հիշ պիր վարլոզ քէնտի ճինսինտէն  
եօգարը օլան պիր շէյ եաքամաղ , չիւնքի  
սէպէպին » էսէրտէն տահա գուլվէթլի օլմա-  
սը վէ էսէրին տէ քէնտիսինէ վիւճուտ վէ-  
րէն սէպէպտէն զիյատէ նէճիպ օլամամաը  
թապիի տիր » , տէր Ա . Թուվմա :

(Մապաի վար)

## Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### Հ Ո Ո Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Ս . Քահանայապետը ուղղեց հետեւեալ նամակը  
Վ . Կեմ . Կարգ . Ռամբոլայի , Վատիկանի Ս . Պետրոսի  
աւագերէցին , իր առողջութեան առթիւ Զեք Աս-  
ուած երգով հանդիսաւոր գոհարանութիւն մատուց-  
ուելուն համար :

Տե՛ր Կարդինալ

Մեծապէս յուզուած՝ այն որդիական սիրայի՛ր զգա-  
ցումներու հաւաստիքն զոր ցոյց տուին երեկ Հռոմա-  
յեցիք՝ Վատիկանի մայր եկեղեցւոյն մէջ կատարուած  
գոհարանութեան կրօնական արարողութեան խանդա-  
վաւորէն մասնակցելով , պատք եւ պատշաճ կը համա-  
րիմ յայտնել շնորհակալութիւնս՝ այդ մեծաշուք հաճ-  
դեսին կատարման նախաձեռնարկ եւ աջակից եղողնե-  
րուն :

Զեզի շնորհակալ կ'ըլլամ, Տե՛ր Կարդինալ, եւ կը  
խնդրեմ որ հաճիք թարգման հանդիսանալ զգացումնե-  
րուս՝ Վատիկանի Մայր եկեղեցւոյն Տ . Տ . Կանոնիկոս-  
ներուն եւ կղերին եւ աշխատհական վերակացուններուն  
մօտ : Հաճեցե՛ք նոյնպէս իրենց հաւաստել թէ այդ շա-  
ւախաւորութեան ցոյցերուն փոխարէն միշտ պիտի խըն-  
դրեմ Տիրոջն որ իրենց պարգեւէ ամեն աստուածային  
շնորհներ, որոնց իւր գրաւական, իրենց կու տամ իմ  
առաջիկայական օրհնութիւնս եւ մնամ, Տե՛ր Կարդինալ,  
երախտապատք եւ սիրայի՛ր զգացումներով :

ՊԻՈՍ ԲԱՅԱՆԱՅԱՊԵՏ Ժ .

• • • Հռոմ , Ս . Յակոբ եկեղեցւոյն մէջ . Ալֆոնսօ  
ԺԳ . Ի , Սպանիոյ թագաւորին ծննդեան տարեդարձին  
առթիւ Զեք Ասուած երգուեցաւ մեծաշուք հան-  
դէսով , որուն նախագահեց Վ . Կեմ . Կարգ . Մէրի տէլ  
Վալլի . Ներկայ գտնուեցան Մ . Գալլըթտն , սպանիա-  
կան դեսպանը և ուրիշ բարձրաստիճան անձնաւորու-  
թիւններ :

• • • Նորընտիր Կարդինալ Փոփանորդը Վ . Կեմ . Բոմ-  
բիլի , Ս . Յովհ . Լատերանի Մայր-եկեղեցւոյն մէջ  
ձեռնադրութիւններ կատարեց Ամեն . Երրորդութեան  
տօնին օրը :

• • • Կոստանդինեան ԺԶ . դարադարձի հանդիսու-  
թիւնները հետզհետէ կը կատարուին Հռոմի Ս . Պետ-  
րոսի , Ս . Յովհ . Լատերանի , Ս . Ագնէսի , Ս . Պօղոսի ,  
Ս . Խաչի և ուրիշ եկեղեցիներու մէջ :

• • • Եղմ . Ի Լատին Պատրիարք Գեր . Գոմասէի  
տիժմ կը գտնուէ Հռոմ , իր թեմին գործերուն կար-  
գադրութեան համար :

### ՀԱՅ ԿԱՅՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Յռնաց Պատրիարքին, Տէր Երեմանոսի , անուան  
տարեդարձին առթիւ Արհի . Ռոքոսեան Արքեպիս-  
կոպոս . Կ . Պատրիարքական Փոփանորդը և Գեղյ ,  
Յովհ . Թ . Ծ . Վ . Կէտիկեան՝ Ամեն . Հոգեւոր Տէրոջ  
կողմէ , կերակի օրը , շնորհաւորութեան գացին Յու .



նաց Պատրիարքարանը և սիրալիր ընդունելութիւն գտան Պատրիարքէն:

✱ Կիրակի օրը, Ա. Յ. Կարգին մայր-վանատան մէջ տեղի ունեցաւ Մարեմայ Դատերաց և Հետամուտներու ընդունելութեան սրտագրաւ արարողութիւնը: Պատարագեց և յուզիչ քարոզ մը խօսեցաւ Արհի. Ռոքոսեան Արքեպսկ. Ս. Հաղորդութեան մօտեցան հարիւրի չափ օրհորհներ:

#### Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Տերութիւնը կը շարունակեն ջանալ որ արագօրէն ստորագրուին հաշտութեան նախագիծերը: Լոնտոնի գեղարվարական խումբի կազմէ քաղաքացի թէ հաշտութեան նախագիծերուն դաշնագրին մէջ Պալ-քանեան դաշնակցներուն կողմէ ներմուծել առաջարկուած փոփոխութիւններուն վիճարանութիւնը տեղի պիտի տայ նոր յապաղուքներու: Թուրքիա էական կը նկատէ որ բոլոր պատերազմիկները անյապաղ ստորագրեն տե-րութեանց պատրաստած հաշտութեան դաշնագրին նախագիծերը: Նոյնութեամբ փոփոխութեան մասին զուգահեռ պիտի բանայ նորանոր առաջարկներու և բանակցու-թիւնը պիտի երկարին անպայման: Սըր Էտուարտ Կրէյ զեկոյց բոլոր պատուիրակներուն թէ անհրաժեշտ հարկ է նշնութեամբ և անմիջապէս ստորագրել հաշ-տութեան նախագիծերը:

✱ Ֆրանսական Մէտոքերի Ընկերութեան Սէն-կալ շոգենաւը, Մայիս 24ին, ճամբայ կ'ելլէ Իզմիրի նաւահանգիստէն: Երեք քառորդ ժամուան չափ տեղ կտրելով երբ կը հասնի Նաթո քերդին մօտ կը զար-նուի նաւահանգիստի (torpille) սը, որ ահաւելի սրտուժով կը պայթի և նաւին ցուկին կողմը վեց մէթր լայ-նութեամբ ահագին ծակ մը կը բանայ: Բոլոր ճամ-բորդները և նաւադները խուճապի կը մտանուին, ու մանք ալ կը մարին: Շոգենաւը կամաց կամաց կը սկսի ընկղմիլ: Բայց նաւապետը, ճարտար և կարող, կը յաջողի 800 մէթրի չափ ալ ճամբայ կտրել և նա-

ւր աւազի վրայ խրեցնել: Արկածին լուրը վայրկենա-բար կը տարածուի: անմիջապէս օգնութեան հասնող ազատարար մակոյկներու և շոգենաւերու միջոցաւ մէջինները կը փոխադրուին Իզմիր: Անձի շատ կո-րուստ չկայ: Պալթութիւն պահուէն ցուկին վրայ գըտ-նուով չորս հոգի օգը ելած են, մէկ հոգի աներեւոյթ եղած և եօթը հոգի վերաւորուած են:

✱ Մայիս 24ին, Հաճի Տափուտ Ընկերութեան Նէվասա շոգենաւը, Սէն-կալի արկածին ճիշդ մօտը, զարնուեցաւ նաւահանգիստի մը և վայրկենապէս ընկղմե-ցաւ: 300ի չափ ուղեւորներէն միայն 40—50 հոգի ա-զատուած են ֆրանս. Պրիւս յաճանաւին կողմէ: Նա-ւահանգիստին տնօրէնութիւնը, նաւերուն ելքն ու մուտքը արգելեց ցնոր տնօրէնութիւն:

#### Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Պէտլինի մէջ շոգենաւը տեղի ունեցաւ, Մայիս 16ին, Պրուսիական Էրնէսթ Աւուսթ Իշխանին Վի-հէլմ կայսեր աղջկան՝ Էլիսաբէտ Տի Վիքթորիա Լու-զայի հետ ամուսնութեան հանդէսը: Ներկայ էին զերման կայսրն ու կայսրուհին, Անգլիոյ Թագաւորն ու Թագուհին, Ռուսիոյ Զարը, Քէմպըրլէնտի գուքսն ու դքսուհին, դերման դահաժառանգ ամուրը և ուրիշ բազմաթիւ իշխաններ և իշխանուհիներ: 4100 հոգիի հացկերոյթ տրուեցաւ: Իրիկունը Զարը դարձաւ Ռուսիոյ — Վիլհէլմ կայսեր աղջկան՝ Սուլթանը նուէր զրկած է թանկապին խաչով գորգ մը. և Սպա-նիոյ Թագաւորը՝ Մարիո-Լուիզա պատուանշանը:

Անգլիոյ և Ռուսիոյ Վեհապետներուն միեւ-նոյն ժամանակ Պէտլին գտնուիլը և անոնց սիրալիր հանդիպումը Վիլհէլմ կայսեր հետ, թէեւ արդիւնք չէ քաղաքական պատճառներու, սակայն ամենուրեք կը նկատուի իբրեւ նոր ուշադրաւ նշան մը թէ Եւ-րոպա կրնայ վտառհաւորութիւն ունենալ որ արեւելեան ինքիները վերջապէս պիտի պարզուին և կացութիւ-նը հեռոց հետէ պիտի խաղաղի:

#### Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

|                                                 |     |
|-------------------------------------------------|-----|
| Դէպքեր եւ սկզբունքներ                           | 337 |
| Տէր Կոմիսսա Բահանայ                             | 340 |
| Հէյթըր ինքիմալիէնին ալիլէ վասիթասլ իլէ քերագըսը | 343 |
| Մովսէ ասղը                                      | 345 |
| Մայիսի Ս. Հաղորդութեան համաժողովը               | 345 |
| Եօթնեակ Բիսոսնէի                                | 347 |
| Սամսոնէն                                        | 348 |
| Այլ եւ այլք                                     | 349 |
| Գաթուիք Մէգնէպի Էսասլար                         | 350 |
| Տեղեկագրական                                    | 351 |

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԵՆ-ԽՄԱԳՐԱՊԼՏ



ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Աւետիգանց Նաբաբերքի, Բերա, Պայրամ վոդայ քիւ 5, Կ. Պոլիս







ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, արեւկան՝ 40 դնկ. արծ. վեցամսեայ՝ 20.—  
մէկ քիւ՝ 1 դնկ.:— Արամասիման՝ ար. ժր. 10. վեցամս. 5.—Վհարմունք կանխիկ են:

ՀԱՍՏԷ.— Կարողիկե Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

---

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ.— 1.—Արձագանգ կը նրաստակուի Շաքաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նշանութեամբ նրաստակել իրեն ղրկուած ո՞ր եւ է յօդուած: 3.—Կեղծանունով ղրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել խմբագրապետին: 4.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէ՛տ է գրուած ըլլան թուրքին մէկ կաղմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէ՛տ է անհրաժեշտ երկու դանեկանի նամակագրութիւն ի միասին ղրկել:

---

ՏՊԱՐԱՆ Կարողիկե Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի նոյն եւ ի վիճակի է որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը սպուին ամէն տեսակ ծանուցումներ, զիրքեր, տետրեր, հրաւիրագիրներ, բարդեր, բարդ-տետրեր, մանագրներ, եւն., եւն.: Դիւները ամմրցելի կերպով ածան են: Դեղեցկագիտական նաւթակի եւ տպագրական մագրութեան կաղմանէ յանախարդները անտարակոյս գա՛ն պիտի մնան:

---

ԿԸ ԾԱԽՈՒԻ «Տարրական Սկզբունք Բրիտանեական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Դիւն, ամուր թղթակազմը 2 դնկն.:

---